

կասկած հալը խառն պէտք է լինի. մի ժամանակ դողութեան, աւազակութեան մէջ լազոնի էր մեր հարեան Համամլի գիւղը, իսկ ալժմ Մեծ-Ղարաքիլիսան բարձր է կանգնած նրանից: Գողերը, աւազակները աչքերն իս առաջն է. գիտենք, ճանաչում ենք, երբեմն էլ բռնում ենք նրանց, սակաչն բարեկամութիւնից, խաթրից, երկիւղից և կամ անտարբեր ու անուշադիր լինելուց չենք վստահանում ձեռք տալ նրանց, որով և ապացուցանում ենք, որ ինքներս անամօթներ ենք, ինքներս նրանց պաշտպանողներ ենք, ուրեմն և՛ գող և՛ դողակիցներ, և պատճառներ ենք շարժատանների շատանալուն: Դեռ դարունը ճոր է բացել՝ ալն ինչ բազմաթիւ գողութիւններ և աւազակութիւններ են պատահել, գողանում են աղքատի մի լուծ եզը, մի լուծ գոմէշը, մի կովը, ապրելու միակ պայմանները, որի հետ կապած է նրա ընտանիքի կեանքը. և ալսպիսի անգթութիւնները վերաջ մեր գիւղական վարչութիւնները շատ թույլ և անտարբեր աչքով են նայում. միթէ կարող են արդարանալ՝ երբ գողութիւնը, սպանութիւնը լսում անսնում են՝ և խիստ միջոցների շին գիմում մերկացնելու համար. համարձակ կարող եմ ասել, որ ալսպիսի թուլութեան և անլուրջ ղեկավարութեան հաղիւ թէ մարդ երբ և իցէ հանդիպի:

13 մալիսի, 1893 թ. Մեծ-Ղարաքիլիսայ:

II

ՍԵՒ ԺՈՎԻ ԱՓԵՐԻՑ

Յ. ՄՈՒՐԱԿԵԱՆՅԻ

Գաղթիւ և պանդխտել հալրենիքից՝—ասա ալն միակ ճանապարհը, որին գիմում է հալածւած թիւրքահալը, երբ նեղութիւններն ու տուրքերը պաշարում են նրան:

Մի կողմ թողնելով պանդխտութեան ալն հազարաւոր փորձերը, որ լինում են վերջին ժամանակներս թիւրքա-Հալաստանի ներքին կենտրոնական նահանգներից զէպի Կովկաս, Կ. Պոլիս, Ամերիկա, ևս թէ ալս և թէ իմ լաջորդ նամակներովս խօսելու եմ մասնաւորապէս թիւրքահալ ալն գաղթական շարժումների մասին, որ ուղղւած են Սե-ժովի հարաւային Անատոլիական ամիրից—զէպի Կովկասեան արեւելեան ամիրը:

Ապրելով ինքս Սև ծովի ափերի հալ գաղթականները մէջ և չարաբերութեան մէջ լինելով ափերի բոլոր տարագրւած թիւրքահալ գաղթականները հետ, ալսուհետև համակրելի «Մուրճ»-ի միջոցով եւ կաշխատեմ ժամանակ առ ժամանակ տեղեկութիւններ տալ մեր գաղթական աշխարհից՝ թիւրքահալերի նորանոր գաղթական շարժումները մասին, նրանց հալրենական ներկալ տնտեսական տխուր կացութեան և այն պատճառների վրայ, որոնք թիւրքահալին հեռացնում են իր խեղճ հալրենիքից:

Սկսած Մուխոմաի մօտերքից մինչև Անապա, Մալկոպ և Եկատերինոգար, Կովկասեան ափերի ամբողջ երկարութեան վրայ դուք կը տեսնէք իրարից հեռու նստած հալ գաղթականների ցիրուցան խմբեր՝ Անատոլիայի ափերից եկած: Կովկասեան ափերի բազմացեղ և բազմալեզու գաղթականների մէջ հալ գաղթականը մինչև ալսօր էլ դեռ պահպանել է իր ցեղալին և հալրենաւանդ ինքնուրոյնութիւնը: Հագուստը, բարբառը, բարբերը, նիստ ու կացը՝ սրանք բոլորն էլ ասում են ձեզ, որ ալք մարդիկը թիւրքիալից են եկել, օտար երկրի ծնունդ են, ուրիշ պայմանների տակ մեծացած:

Նրանք վաղուց են սկսել գաղթել դէպի մեր երկրի ափերը: Վաթսունական թւերի սկզբներից արդէն նրանք սկսում են գալ այս կողմերը:

Գաղթականների մեծ մասը Տրապիզոնի Նահանգի հալաբնակ գիւղերից են, մի փոքր մասն էլ Սինոպի կողմերից: Գաղթականութիւնը շարունակուում է. դեռ մինչև ալսօր էլ նորանոր գաղթականներ են գալիս Անատոլիական ափերից դէպի մեր կողմերը: Թիւրքական հալածանքների վերջ չեղաւ և, խաղաղասէր հալի համբերութիւնը հատած, օտարութիւն է դիմում, չկարողանալով իր թշուառ հալրենիքում մի կտոր հաց ձարել և իր սիրած խաղաղութիւնը գտնել:

Թիւրքահալ պանդուխտները մեծ բազմութիւնով սկսել են վերջին տարիներս գալ: Նրանք գալիս են նոյն տեղերից, ինչ որ ընտանիքով գաղթողները և մնում էլ են նրանց մօտ, Սև ծովի հալագաղթ գիւղերում: Պանդուխտները գալիս են մեծակ, մէկ-մէկ, կամ խմբով՝ մի քանի հողով: Չէք գտնի հալ գաղթականների մի գիւղ, ուր պանդուխտներ չլինին:

Մի քանի տարի առաջ՝ երբ ես ալցելուում էի Սև ծովի ափերի հալ գաղթականներին, հալ պանդուխտների թիւը 400-ի էր հասնում. իսկ ալսօր դուցէ հազարից էլ ատելի լինի: Գաղթականների հետ միասին պանդուխտների թիւն էլ է ատելացել: Մի կողմից հալրենիքի տնտեսական նեղ վիճակը, միւս կողմից իրանց գաղթական հալրենակիցների համեմատաբար ապահով կացութիւնը՝ շատերին է քաշում դէպի Կովկասեան ափերը:

Այս գարունն սկսելուն պէս՝ համարեա ամեն շաբաթ մինչև աչօր նոր-նոր գաղթականներ և պանդուխտներ են գալիս Սուխումի կողմերը: Եթէ հարցուվորձէք եկտրներին, կիմանաք որ նրանցից շատերը, համարեա ամենքը հայրենիքում պարտք են անում և այնպէս են գալիս աչ կողմերը, որովհետև աւքան ճանապարհ գալու անգամ փող չեն ունենում: Շատերը տարված են լինում մեծ տոկոսով պարտքի տակ ընկնել թէ ինչ է՝ մի կերպ կարողանան մեր կողմերն անցնել: Նրանք բոլորն էլ լոյս են դնում, որ Վովլասեան ասիերում մի առ ժամանակ մնալուց լիտու, թէ պարտքերը կը տան և թէ մի քիչ գումար էլ լիտ կը տանեն: Խրաւի նրանց լուսերը դոնէ մինչև աչօր արդարացել են:

Աչօր Ան ծովի Վովլասեան ասիերը և մասնաւորապէս Սուխումի շրջանը թուրքունի արդիւնարերութիւնով տնտեսական մեծ առաջադիմութիւն է անում: Թուրքունը լաւ արտահանում է. երկրագործի աշխատանքը լաւ վարձատրում է, այն ինչ բանտը չէ ճարում աչ կողմերը: Բանտրների մեծ պահասութիւն է զգացում: Այդ է պատճառը, որ պանդուխտները համարեա ծովափը ելնելուն պէս, տալարկութիւններ են ստանում, գործ և աշխատանք են գտնում: Գոնէ մինչև աչօր Սուխումի կողմերն և կողմերից ոչ մէկը պարապ չէ մնացել. ամենքն էլ գործի վրայ են և շատ էլ ձեռնտու պայմաններով:

Նրանցից շատերը մտնում են իրանց հայրենակից գիւղացիների մօտ ծառայի պաշտօնով, մասնակցելով նրանց բոլոր երկրագործական աշխատանքներում: Աւելի փորձածները և թուրքունի գործին հմուտները մտնում են առանձին պալմանով—նրանց հետ թուրքունն ցանում և վերջը մեծ մասամբ թուրքունի մի երրորդ մասը ստանում: Սա աւելի ձեռնտու է լինում շատ անգամ, քան ծառայ մտնելը:

Թէ ծառաները և թէ թուրքունից մաս ստանալու պալմանով մտնողները ընդհանրապէս լաւ պայմանների մէջ են. իրանց ծանօթ հայրենական շրջան, նոյն տունը, նոյն սովորութիւնները, նոյն կենցաղը, նոյն բարքերը, ինչ որ տիրում են իրանց գիւղերում: Այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ լաւ էլ վարձատրում են: Ուրիշ տարիներում ալգպիսի ծառաների ամսական վարձը 10 ռուբլին չէր անցնում. սովորաբար ծառայի տարեկան վարձը 100 ռուբլի էր լինում: Այս տարի ալգ գնով ծառայ չի գտնուում. ամսական 15 ռուբլուց պակաս ոչ ոք չի համաձայնում մնալ: Սրավարձն էլ բաւական[»] բարձրացել է, չիմա որ աշխատանքի ալնքան էլ թո՛նդ ժամանակը չէ, 70 կողէկ օրավարձ են պահանջում. ամառը, երեկ, մի ռուբլիով էլ չեն համաձայնի: Ալգքան վարձատրութեան հետ նրանք ստանում են բնակարան, ուտելիք և շատ անգամ տրեխներն էլ հետը: Պանդուխտը ամբողջ տարին համարեա ոչինչ ծախս չի ունենում. նրա ծախսը միայն հայրենիքից գալ-գնալն է: Ինչ խօսք որ

այդ հանգամանքը շատերին կարող է գրաւել, նոյն իսկ անպիսիներին, որոնք տնտեսապէս շատ էլ մեծ նեղութեան մէջ չեն հայրենիքում:

Բայց և անպէս էլի պանդխտութեան գլխաւոր պատճառը — հայրենիքից ստացած հարկւրաւոր նամակներ են անցել ձեռքս, որոնց ամենքի մէջ էլ հալը իր սև օրերն է լալիս: Սրտածմլիկ տողեր են դրանք... Մէկը գրում է, թէ իրանց միակ կովը ծախել է պարտքի պատճառով, միւրը տուրքերի համար եղներն է տւել, որի կապէն են խլել. մի ուրիշը գանդատուում է, որ ուտելու հաց չունի, գարի և վարսակ են ուտում... Հապա չեմ ասում ընտանեկան դժբաղտութիւնները, եթէ պատահած են լինում, և բոլորի վերջն էլ ինդիր-աղաչանք, ուղղած իրանց կարօտալի պանդխտին, որ շտապէ հասցնել իրանց արքան-արքան ոսկի, որ սովամահ չլինին, որ պարտքի և միւս կարիքների տան, Սրբեմն էլ պանդխտին պարտաւորեցնում են չետ գնալու ժամանակ՝ իրանցից մէկի համար (կարա) տանել, միւսին՝ «բաչլըր», երրորդին «չուխապի շալար», ուրիշին՝ մի ուրիշ բան և այլն:

Պանդխտի սիրտը լցում է հայրենիքի կարօտով. նրանցից շատ շատերը ընտանեքաւոր մարդիկ են, թէև հազիւ երիտասարդական ծաղիկ հասակում: Ինչեր չեն անցնում նրա մտքից. քանի քանի անուններ են նրա միտքը գալիս: Խուլ և լուիկ հառաչանքը դուրս է թռչում նրա սիրտը հողուց: Ո՞ր մէկին օգնէ. նա հէնց օգնելու համար տուն ու տեղը ձգել, սիրելիներին թողել, կարիւր-կուրբաթ է գարձել, որ մի քիչ փող աշխատի և նրանց օգնէ, բայց տնից դեռ մի քանի ամիս չանցած, արդէն նոր-նոր ցաւերի և նեղութիւնների ձայներ է լսում. նրանից օգնութիւն են ուղում:

Միթէ նա մենակ կարող է այդ բոլոր ցաւերին վերջ տալ: Պանդխտական դառն աշխատանքով ձեռք բերած փողով հազիւ նա իր պարտքը կը տալ և մի երկու կարիք կը տեսնի, ինչ պիտի լինեն հապա միւս պարտքերը: Հապա թիւրքական կառավարչական տուրքերը, որոնք ջուր են կտրում գիւղացու աշխատանքը և նրան օրական հացից զրկում: Չէ, նա ուժ չունի այդ բոլոր նեղութիւններին դէմ դնելու համար. դեռ նա հասած չէ այդ գիտակցութեան: Եւ ահա աչօրապէս պանդխտը՝ հանգիստը կորցրած և լաւ օր տեսնելու չոքը կտրած, աո՛նում է ընտանիքը և անձնատուր լինում Սև ծովի ալիքներին — կովկասեան ափերն անցնելու համար: Արպիտով մէկ անգամ կովկասեան ափերն հասած՝ պանդխտողը հայրենիքից բոլորովին հեռանում է և անդառձ գաղթական դառնում:

Կովկասեան ափերի աչօրան թիւրքահալ գաղթականներից շատերը սկզբում արդպէս են եկել այս կողմերը՝ — մենակ, առանց ընտանիքի: Եւ ապա միայն՝ երբ տեսել են, որ այստեղ իրանց սարսափեցնող տուրքեր չկան, հացը ուրիշը չէ խլում, թութո՛ւնի լաւ գործ կալ, այդ բոլորը ինչ

խօսք որ նրանց մոռացնել պիտի տալին իրանց աւերակ հալրենիքը, ինչ-
քան էլ անմոռանալի և զեղեցիկ լինէր:

Գեո. մինչև սուօր էլ հալ գաղթականը սարսափով է զիշում հալրե-
նիքում անցկացրած օրերը և տեսած նեղութիւնները: Իսկ երբ խօսքը
զալիս է տուրքերի վրայ, ծալրակեղ չուստատու թիւն է դուրս թռչում
նրա բերանից: Հալը չօտը կտրել է, թէ Թիւրքիայի ձեռքի տակ կարելի
է ապրել և հանգիստ գտնել: Նրա բոլոր աշխատանքը տուրքերին չէ բա-
ւականանում. էլ ի՛նչպէս մնալ ալգպիսի երկրում: Ապրելու համար մնում
է երկու միջոց՝ կամ մաքառել, զէմ դնել ալդ նեղութիւններին և կամ թող-
նել ամեն բան և փախչել: